

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

▶B

▶B

**ԽՈՐՀՐԴԻ 1996 թվականի ապրիլի 29-ի 96/26/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

**Ավտոճանապարհային փոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորի գործունեություն ծավալելը թույլատրելու եւ այդ օպերատորներին ազգային ու միջազգային փոխադրումների ոլորտում գործունեություն իրականացնելու իրավունք տալու նպատակով դիպլոմների, վկայականների եւ որակավորումների մասին վկայող այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին**

(ՊՏ L 124, 23.05.1996, էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		թիվ	էջ	ամսաթիվ
▶M1	Խորհրդի 1998 թվականի հոկտեմբերի 1-ի L 277 98/76/ԵՀ հրահանգ	17		14.10.1998
▼M2	Խորհրդի 2004 թվականի ապրիլի 26-ի L 168 2004/66/ԵՀ հրահանգ	35		01.05.2004
▼M3	Պայմանագիր միջեւ	L 157	203	21.06.2005
▼M4	Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի L 363 2006/103/ԵՀ հրահանգ	344		20.12.2006

Փոփոխված՝

«Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության ու Սլովակիայի Հանրապետության անդամակցության պայմանների եւ «Եվրոպական Միության հիմնադրման մասին» պայմանագրերին համապատասխան կատարվող կարգավորումների մասին ակտով:

**"B**

**ԽՈՐՀՐԴԻ 1996 թվականի ապրիլի 29-ի 96/26/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

**Ավտոճանապարհային փոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորի գործունեություն ծավալելը թույլատրելու եւ այդ օպերատորներին ազգային ու միջազգային փոխադրումների ոլորտում գործունեություն իրականացնելու իրավունք տալու նպատակով դիպլոմների, վկայականների եւ որակավորումների մասին վկայող այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 75-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189գ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան (3),

քանի որ «Ավտոճանապարհային բեռնափոխադրման օպերատորներին ազգային եւ միջազգային փոխադրումների իրականացումը թույլատրելու մասին» Խորհրդի 1974 թվականի նոյեմբերի 12-ի 74/561/ԵՏՀ հրահանգը (4), «Ավտոճանապարհային ուղեւորափոխադրման օպերատորներին ազգային եւ միջազգային փոխադրումների իրականացումը թույլատրելու մասին» Խորհրդի 1974 թվականի նոյեմբերի 12-ի 74/562/ԵՏՀ հրահանգն (5) ու «Բեռնափոխադրման եւ ավտոճանապարհային ուղեւորափոխադրման օպերատորների դիպլոմների, վկայականների եւ որակավորումների մասին վկայող այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման, ինչպես նաեւ այդ օպերատորների կողմից գործունեություն ծավալելու իրենց իրավունքն արդյունավետ կերպով իրականացնելուն նպաստող միջոցների մասին» Խորհրդի 1977 թվականի դեկտեմբերի 12-ի 77/796/ԵՏՀ հրահանգը (6) մի շարք դեպքերում էական փոփոխությունների են ենթարկվել, եւ քանի որ հստակության ու նպատակահարմարության նկատառումներից ելնելով, սույն Հրահանգները պետք է համախմբվեն մեկ միասնական տեքստում,

քանի որ տրանսպորտային ծառայությունների շուկայի ձեւավորումը տրանսպորտի ոլորտի՝ Պայմանագրով նախատեսված ընդհանուր քաղաքականության իրականացման էական գործոններից մեկն է,

քանի որ ավտոճանապարհային բեռնափոխադրման կամ ուղեւորափոխադրման օպերատորի (այսուհետ երկուսն էլ՝ «ավտոճանապարհային փոխադրման օպերատոր») գործունեություն ծավալելը թույլատրելու պայմանների համակարգմանը նպատակաուղղված միջոցների ընդունումը հավանական է, որ կնպաստի այդ օպերատորների կողմից գործունեություն ծավալելու իրենց իրավունքի արդյունավետ իրականացմանը,

քանի որ անհրաժեշտ է նախատեսել ազգային եւ միջազգային փոխադրման ոլորտում ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեության ծավալումը թույլատրելու վերաբերյալ ընդհանուր կանոններ՝ նպատակ ունենալով ապահովելու, որպեսզի այդ օպերատորներն ունենան ավելի լավ որակավորում եւ այդպիսով նպաստելով շուկայի կատարելագործմանը, մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը՝ հոգուտ օգտվողների, օպերատորների եւ, ընդհանուր առմամբ՝ տնտեսությանը եւ ի նպաստ՝ ճանապարհային առավել ամուր անվտանգության ապահովման,

քանի որ, հետեւաբար, ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն ծավալելը թույլատրելու կանոնները պետք է վերաբերեն բարի համբավին, ֆինանսական վիճակին եւ օպերատորների մասնագիտական որակավորմանը,

քանի որ, այնուամենայնիվ, անհրաժեշտ չէ, որպեսզի այդ ընդհանուր կանոններում ներառվեն տնտեսական առումով սահմանափակ կարեւորություն ունեցող փոխադրման որոշ տեսակներ,

քանի որ 1993 թվականի հունվարի 1-ից ի վեր միջսահմանային ավտոճանապարհային բեռնափոխադրման գործընթացները կառավարվել են Համայնքի՝ որակական չափորոշիչների վրա հիմնված լիցենզավորման համակարգով,

քանի որ շուկայի արդյունավետ վերակազմակերպման նպատակով անհրաժեշտ է, որ ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեության ծավալումը թույլատրելը հավասարապես պայմանավորված լինի այն հանգամանքով, որ հայտատուն չունենա ծանր հանցագործությունների կատարման եւ ոչ մի մեղադրանք, այդ թվում՝ առեւտրային բնույթի եւ ոչ էլ ճանաչված լինի այդ գործունեությունն իրականացնելու համար ոչ պիտանի, ինչպես նաեւ այդ թույլտվությունը պայմանավորված լինի ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեությունը կարգավորող կանոնակարգերին համապատասխանելու հանգամանքով,

քանի որ տարբեր անդամ պետություններում, մասնավորապես, կազմակերպությունների նկատմամբ համահավասար վերաբերմունքի ապահովման նպատակով անհրաժեշտ է սահմանել համապատասխան ֆինանսական վիճակի առնչությամբ պահանջի վերաբերյալ որոշ չափորոշիչներ, որոնք պետք է բավարարվեն ավտոճանապարհային փոխադրման օպերատորների կողմից,

քանի որ բարի համբավի եւ ֆինանսական վիճակի առնչությամբ, ճիշտ կլինի ավտոճանապարհային փոխադրման օպերատորի ծագման երկրի կամ այն երկրի, որտեղից նա ժամանել է, իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթղթերը ընդունել որպես ընդունող անդամ պետությունում համապատասխան գործունեության ծավալումը թույլատրելու համար բավարար ապացույց,

քանի որ մասնագիտական որակավորման առնչությամբ խորհուրդ է տրվում նախատեսել, որ հայտատու հանդիսացող ավտոճանապարհային փոխադրման օպերատորն իր որակավորման իսկությունն ապացուցի գրավոր քննություն հանձնելու միջոցով, ինչպես նաեւ նախատեսվի, որ այդ անդամ պետությունները կարող են հայտատուին ազատել նման քննությունից, եթե նա բավարար պրակտիկ փորձի մասի վկայող ապացույց տրամադրի,

քանի որ, ինչ վերաբերում է մասնագիտական որակավորմանը, ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն ծավալելը թույլատրելու վերաբերյալ Համայնքի դրույթների համաձայն տրված վկայականները պետք է ընդունող անդամ պետության կողմից ճանաչվեն, որպես բավարար ապացույց,

քանի որ դրույթներ պետք է նախատեսվեն սույն Հրահանգի կիրառման նպատակով անդամ պետությունների միջեւ փոխօգնության համակարգի համար,

եւ քանի որ սույն Հրահանգը չպետք է ազդի անդամ պետությունների՝ II հավելվածի Բ մասով սահմանված հրահանգների իրականացման կամ կիրառման վերջնաժամկետների մասով պարտավորությունների վրա,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

## ԲԱԺԻՆ 1

Ավտոճանապարհային օպերատորի գործունեության ծավալումը թույլատրելը

### Հոդված 1

1. Ավտոճանապարհային բեռնափոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորի գործունեության ծավալումը թույլատրելու գործընթացը կարգավորվում է անդամ պետությունների կողմից ընդունված դրույթներով՝ սույն Հրահանգի ընդհանուր կանոնների համաձայն:

2. Սույն Հրահանգի նպատակներով՝

#### ▼M1

— «ավտոճանապարհային բեռնափոխադրողի գործունեություն» նշանակում է ցանկացած կազմակերպության՝ վարձատրության կամ հատուցման դիմաց բեռների փոխադրման գործունեություն՝ տրանսպորտային միջոցով եւ կամ տրանսպորտային միջոցների համակցությամբ.

"Բ"

— «ավտոճանապարհային ուղեւորափոխադրողի գործունեություն» նշանակում է ցանկացած կազմակերպության գործունեություն, որն իրականացնում է ավելի քան ինը մարդ՝ ներառյալ վարորդը, փոխադրելու համար նախագծված, սարքավորված եւ այդ նպատակի համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, ինչպես նաեւ հասարակական կամ հատուկ կատեգորիայի օգտվողների համար նախատեսված ուղեւորափոխադրման ծառայություններ՝ փոխադրվող անձի կամ փոխադրման կազմակերպչի կողմից տրվող վճարի դիմաց.

— «կազմակերպություն» նշանակում է շահույթ հետապնդող կամ շահույթ չհետապնդող գործունեություն իրականացնող ցանկացած ֆիզիկական անձ, ցանկացած իրավաբանական անձ, շահույթ հետապնդող կամ շահույթ չհետապնդող գործունեություն իրականացնող, իրավասուբյեկտություն ունեցող անձանց ասոցիացիա կամ խումբ, կամ ինքնուրույն իրավասուբյեկտություն ունեցող կամ այդպիսի իրավասուբյեկտություն ունեցող

մարմնի ենթակայության տակ գործող ցանկացած պետական մարմին.

▼M1

— «սովորական բնակության վայր» նշանակում է այն վայրը, որտեղ անձնական եւ աշխատանքային կապերի հետեւանքով սովորաբար՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում առնվազն 185 օր բնակվում է ցանկացած անձ, իսկ աշխատանքային կապերի բացակայության պարագայում այն վայրը, ուր այդ անձն ապրում է անձնական այնպիսի կապերի հետեւանքով, որոնք սերտորեն կապում են այդ անձին այն վայրի հետ, որտեղ նա ապրում է.

Այնուամենայնիվ, եթե անձի աշխատանքային կապերը մի վայրում են, իսկ անձնական կապերը՝ մեկ այլ վայրում, եւ ով, հետեւաբար, երկու կամ ավելի անդամ պետություններում գտնվող տարբեր վայրերում ապրում է հերթականությամբ, ապա սովորական բնակության վայր համարվում է նրա անձնական կապերի գտնվելու վայրը՝ պայմանով, որ այդ անձը պարբերաբար վերադառնում է այդտեղ: Այս վերջին պայմանի բավարարումը չի պահանջվում այն դեպքում, երբ անձը բնակվում է անդամ պետությունում՝ որոշակի տեւողությամբ խնդրի իրականացման նպատակով: Համալսարան կամ դպրոց հաճախելը չի ենթադրում սովորական բնակության վայրի փոփոխություն:

▼B

*Հոդված 2*

▼M1

1. Սույն Հրահանգը չի կիրառվում այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք ծավալում են ավտոճանապարհային բեռնափոխադրողի գործունեություն՝ տրանսպորտային միջոցով եւ կամ տրանսպորտային միջոցների համակցությամբ, որոնց թույլատրվող առավելագույն քաշը չի գերազանցում 3,5 տոննան: Անդամ պետություններն, այնուամենայնիվ, փոխադրման բոլոր կամ որոշ կատեգորիաների համար նվազեցնում են սահմանային այդ շեմը:

▼B

2. ա) Անդամ պետությունները, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, կարող են սույն Հրահանգի բոլոր կամ որոշ դրույթներ չկիրառել ավտոճանապարհային բեռնափոխադրման այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք բացառապես իրականացնում են ազգային

փոխադրումներ եւ չնչին ազդեցություն ունեն տրանսպորտային ծառայությունների շուկայի վրա՝ պայմանավորված հետեւյալ գործոններով՝

– փոխադրվող ապրանքների բնույթով կամ

– կարճ տարածությամբ:

Չնախատեսված հանգամանքների դեպքում անդամ պետությունները կարող են նշված դրույթները ժամանակավորապես չկիրառել Հանձնաժողովի հետ խորհրդակցությունների անցկացման ընթացքում:

#### ▼M1

բ) Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնելուց հետո կարող են սույն Հրահանգի բոլոր կամ որոշ դրույթներ չկիրառել այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք ավտոճանապարհային բեռնափոխադրման օպերատորի գործունեություն են ծավալում՝ օգտագործելով այնպիսի տրանսպորտային միջոցներ, որոնց թույլատրվող առավելագույն քաշը տատանվում է 3,5 տոննայից 6 տոննայի միջեւ, ինչպես նաեւ այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք բացառապես ներքին փոխադրումներ են իրականացնում եւ չնչին ազդեցություն ունեն տրանսպորտային ծառայությունների շուկայի վրա՝ կարճ տարածության պատճառով:

#### ▼B

3. Անդամ պետությունները, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո կարող են սույն Հրահանգի բոլոր կամ որոշ դրույթներ չկիրառել այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք ոչ առեւտրային նպատակներով բացառապես ավտոճանապարհային ուղեւորափոխադրման որոշակի ծառայություններ են իրականացնում՝ կամ որոնց հիմնական գործունեությունը տարբերվում է ավտոտրանսպորտային ուղեւորափոխադրման օպերատորի գործունեությունից եւ այն դեպքում, երբ դրանց կողմից իրականացվող փոխադրումները միայն չնչին ազդեցություն ունեն տրանսպորտային ծառայությունների շուկայի վրա:

### Հոդված 3

1. Այն կազմակերպությունները, որոնք մտադիր են ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն ծավալել, պետք է՝

ա) ունենան բարի համբավ.



բ) ունենան համապատասխան ֆինանսական վիճակ.

գ) բավարարեն մասնագիտական որակավորման հետ կապած պայմանները:

Այն դեպքում, երբ հայտատուն ֆիզիկական անձ է եւ չի բավարարում (գ) կետի պահանջը, իրավասու մարմինները, այդուհանդերձ, կարող են նրան թույլատրել զբաղվել ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեությամբ՝ պայմանով, որ նա նշված մարմիններին կներկայացնի մի մարդու, ով կբավարարի (ա) եւ (գ) կետերի պահանջները եւ շարունակաբար ու արդյունավետորեն կկազմակերպի կազմակերպության կողմից իրականացվող փոխադրումները:

Այն դեպքում, երբ հայտատուն ֆիզիկական անձ չէ՝

- ա) պահանջը պետք է բավարարվի այն անձի կամ անձանց կողմից, ովքեր պետք է շարունակաբար եւ արդյունավետորեն կազմակերպեն կազմակերպության կողմից իրականացվող փոխադրումները: Անդամ պետությունները կարող են պահանջել, որպեսզի կազմակերպությունում աշխատող մյուս անձինք եւս բավարարեն այդ պահանջը.

- բ) պահանջը պետք է բավարարվի առաջին պարբերությամբ նշված անձի կամ անձանց կողմից:

2. Անդամ պետությունները սահմանում են այն պայմանները, որոնք պետք է կատարվեն իրենց տարածքում հիմնադրված կազմակերպությունների կողմից՝ բարի համբավի մասին պահանջը բավարարելու նպատակով:

Նրանք պետք է նախատեսեն, որ այդ պահանջը չկատարվի կամ այլեւս չկատարվի այն դեպքում, երբ այն ֆիզիկական անձը, ով ենթադրվում է, որ պետք է բավարարեր 1-ին պարբերության այդ պայմանը՝

ա) դատապարտվել է ծանր քրեական հանցագործությունների եւ կամ առեւտրային բնույթի հանցագործությունների համար.

բ) գործող ցանկացած կանոնի համաձայն՝ ճանաչվել է ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն ծավալելու համար ոչ պիտանի.

## **"M1**

գ) մեղավոր են ճանաչվել հետեւյալի վերաբերյալ գործող կանոնների խախտումների լուրջ դեպքերի համար՝

–վճարման եւ մասնագիտական աշխատանքի հետ կապված պայմաններ կամ

– ավտոճանապարհային փոխադրման կամ ավտոտրանսպորտային ուղեւորափոխադրման, համապատասխան դեպքում, մասնավորապես, վարորդի վարելու եւ նրա հանգստի ժամանակահատվածի, առետրային նպատակներով օգտագործվող տրանսպորտային միջոցների քաշի ու չափսերի, ճանապարհային անվտանգության ու տրանսպորտային միջոցի անվտանգության, շրջակա միջավայրի պաշտպանության եւ մասնագիտական պարտականությունների հետ կապված կանոններ:

▼B

(ա), (բ) եւ (գ) կետերում նշված դեպքերում բարի համբավ ունենալու պահանջը կարող է մնալ չբավարարված այնքան ժամանակ, քանի դեռ նշված անձը չի արդարացվել կամ, գործող ազգային համապատասխան դրույթների համաձայն, նրա նկատմամբ չի կիրառվել համարժեք ազդեցության ցանկացած այլ միջոց:

3.ա) Համապատասխան ֆինանսական վիճակի մասին պետք է վկայի առկա բավարար ռեսուրսների տիրապետման փաստը, որով կապահովվի կազմակերպության պատշաճ գործունեությունն ու կառավարումը:

բ) Ֆինանսական վիճակի գնահատման նպատակով իրավասու մարմինը հաշվի է առնում՝ կազմակերպության տարեկան հաշվետվությունները, առկայության դեպքում՝ գոյություն ունեցող դրամական միջոցները՝ այդ թվում նաեւ բանկային հաշիվներում պահվող, վերազանցման (օվերդրաֆտի) եւ փոխառության հնարավորությունները, ցանկացած կապիտալ՝ այդ թվում գույք, որոնց առկայությամբ երաշխավորվում է կազմակերպության գործունեության անվտանգությունը, ինչպես նաեւ հաշվի են առնվում ծախսերը՝ ներառյալ ձեռքբերման ծախսերը կամ տրասպորտային միջոցների, շինությունների, գործարանի եւ սարքավորումների համար նախնական վճարումները, ինչպես նաեւ շրջանառու միջոցները:

▼M1

գ) Կազմակերպությունը մեկ տրանսպորտային միջոց օգտագործելու դեպքում պետք է ունենա առնվազն 9000 եվրո արժեքով դրամամիջոցներ եւ պահուստային միջոցներ ու առնվազն 5000 եվրո՝ յուրաքանչյուր լրացուցիչ տրանսպորտային միջոցի համար:

Սույն Հրահանգի նպատակներով՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ եվրոյի արժեքը ֆիքսվում է արժույթային միության երրորդ փուլի ոչ մասնակից երկրների ազգային արժույթով: Կիրառելի դրույքաչափեր են համարվում հոկտեմբերի առաջին աշխատանքային օրը

սահմանված եւ *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակված դրույքաչափերը: Դրանք գործում են հաջորդ օրացուցային տարվա հունվարի մեկից:

դ) (ա), (բ) եւ (գ) ենթապարբերությունների նպատակներով՝ որպես ապացույց, իրավասու մարմինը կարող է ընդունել կամ պահանջել բանկի կամ այլ համապատասխան որակավորում ունեցող հաստատության կողմից հավաստիքների կամ երաշխիքների տրամադրում: Այդօրինակ հավաստիքները կամ երաշխիքները կարող են տրամադրվել բանկային երաշխիքի տեսքով, հնարավոր է նաեւ գրավի կամ արժեթղթի, կամ ցանկացած այլ համանման միջոցներով:

#### ▼B

(ե) (բ),(գ) եւ (դ) կետերը կիրառվում են միայն այն կազմակերպությունների նկատմամբ, որոնց թույլատրվել է ծավալել ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն՝ 1990 թվականի հունվարի 1-ից ի վեր անդամ պետության կողմից ազգային կանոնների համաձայն:

#### ▼M1

4. ա) Մասնագիտական որակավորման հետ կապված պայմանը ենթադրում է I հավելվածով նախատեսված ուսուցման ծրագրի մակարդակին համապատասխան գիտելիքների եւ դրանում նշված առարկաների տիրապետում: Դա որոշվում է պարտադիր գրավոր քննության միջոցով, որից բացի անդամ պետության կողմից այդ նպատակով նշանակված գերատեսչության կամ մարմնի կողմից I հավելվածում ներկայացված կարգով կարող է լրացուցիչ կերպով կազմակերպվել բանավոր քննություն:

բ) անդամ պետությունները կարող են այն հայտատուներին, ովքեր տրամադրում են փոխադրող կազմակերպությունում առնվազն հինգ տարվա կառավարման մակարդակի պրակտիկ փորձի մասին վկայող ապացույց, ազատել քննությունից՝ պայմանով, որ այդ հայտատուները թեստ կհանձնեն, որի հետ կապված միջոցառումների վերաբերյալ որոշումներ կկայացվեն անդամ պետությունների կողմից՝ I հավելվածի համաձայն:

գ) Անդամ պետությունները որոշ բարձր կարգի կամ տեխնիկական դիպլոմներ ունեցողներին, ովքեր I հավելվածում նշված եւ անդամ պետությունների կողմից որոշված առարկաների վերաբերյալ հիմնավոր գիտելիքների տիրապետման մասին ապացույցներ են տրամադրում, կարող են դիպլոմներում նշված առարկաներից քննություն հանձնելու պարտականությունից ազատել:

դ) (ա) կետում նշված գերատեսչության կամ մարմնի կողմից տրվող վկայականը մասնագիտական որակավորման մասին վկայող ապացույց է: Այդ վկայականը պետք է կազմվի ևս հավելվածում նշված ձևով:

ե) Այն հայտատուների դեպքում, ովքեր մտադիր են իրականացնել այնպիսի կազմակերպության շարունակական կառավարումը, որը զբաղվում է միայն ազգային փոխադրումներով, անդամ պետությունները կարող են նախատեսել, որպեսզի նրանց մասնագիտական որակավորումը որոշելիս հաշվի առնվեն միայն ազգային փոխադրումների վերաբերյալ առարկաների մասին գիտելիքները: Այդ դեպքում մասնագիտական որակավորման վկայականի մեջ, որի մոդելը ներկայացված է ևս հավելվածում, պետք է նշված լինի, որ վկայականի տերն ունի միայն այն կազմակերպության արդյունավետ եւ շարունակական կառավարումն իրականացնելու որակավորում, որը փոխադրումներ է իրականացնում միայն վկայականը տրամադրող անդամ պետության տարածքում:

զ) Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո անդամ պետությունը կարող է պահանջել, որ ցանկացած ֆիզիկական անձ, ով ունի մասնագիտական որակավորման վկայական, որը տրվել է մեկ այլ անդամ պետության իրավասու մարմնի կողմից այն ժամանակ, երբ այդ անձն առաջին անգամ պետության ռեզիդենտ էր, 1999 թվականի հոկտեմբերի 1-ից հետո հանձնի առաջին անգամ պետության կողմից այդ նպատակով նշանակված գերատեսչության կամ մարմնի կողմից կազմակերպված լրացուցիչ քննություն: Լրացուցիչ քննությունը պետք է ներառի առաջին անգամ պետությունում իրականացվող ավտոճանապարհային բեռնափոխադրման օպերատորի գործունեության ազգային կողմի մասին հատուկ գիտելիքներ:

Այս կետը կիրառվում է 1999 թվականի հոկտեմբերի 1-ից հետո երեք տարվա ընթացքում: Այդ ժամանակահատվածը կարող է, Պայմանագրի կանոնների համաձայն, Հանձնաժողովի առաջարկի հիման վրա գործող Խորհրդի կողմից երկարաձգվել առավելագույնը եւս հինգ տարով: Դա կիրառվում է միայն այն ֆիզիկական անձանց նկատմամբ, ովքեր մինչ առաջին ենթապարբերության մեջ նշված պայմանների համաձայն մասնագիտական վկայական ստանալու պահը, երբեւէ նշված վկայականը ստացած չեն եղել որեւէ անդամ պետությունում:

▼B

#### *Հոդված 4*

Անդամ պետությունները որոշում են այն պայմանները, որոնցով, չնայած 3 (1) հոդվածին, ավտոճանապարհային փոխադրումներով զբաղվող կազմակերպությունը կարող է ժամանակավոր հիմունքներով աշխատել առավելագույնը մեկ տարի ժամկետով, որը կարող է

երկարաձգվել առավելագույնը վեց ամսով, իսկ պատշաճորեն հիմնավորված հատուկ դեպքերում՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձի մահվան, ֆիզիկական անգործունակության կամ անհրավունակության եւ կամ այն դեպքում, երբ ֆիզիկական անձը բավարարում է 3 (1) (ա) եւ (գ) հոդվածի պահանջները:

Անդամ պետությունների իրավասու մարմինները, բացառության կարգով եւ որոշ հատուկ դեպքերում, միանգամայն կարող են ցանկացած անձի, ով չի բավարարում 3 (1) (գ) հոդվածի՝ մասնագիտական որակավորման հետ կապված պահանջները, թույլատրել կազմակերպել փոխադրող կազմակերպության գործունեությունը՝ պայմանով, որ այդ անձն ունի կազմակերպության ամենօրյա գործունեության ղեկավարման առնվազն երեք տարվա պրակտիկ փորձ:

### *Հոդված 5*

1. Այն կազմակերպությունները, որոնք ապացույցներ են ներկայացնում, որ նախքան՝

- 1978 թվականի հունվարի 1-ը՝ Բելգիայում, Դանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Լյուքսեմբուրգում, Նիդեռլանդներում եւ Միացյալ Թագավորությունում.

- 1984 թվականի հունվարի 1-ը՝ Հունաստանում.

- 1986 թվականի հունվարի 1-ը՝ Իսպանիայում եւ Պորտուգալիայում.

- 1989 թվականի հոկտեմբերի 3-ը՝ նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության տարածքում.

#### ▼M1

- 1995 թվականի հունվարի 1-ը՝ Ավստրիայում, Ֆինլանդիայում եւ Շվեդիայում.

#### ▼B

1. անդամ պետության ազգային կանոնների համաձայն նրանց թույլատրված է եղել զբաղվել կամ ավտոճանապարհային բեռնափոխադրման կամ ավտոճանապարհային ուղեւորափոխադրման օպերատորի գործունեությամբ, իսկ համապատասխան դեպքերում՝ ազգային եւ (կամ) միջազգային ավտոճանապարհային փոխադրումներով, պետք է ազատվեն 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխանելու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պահանջից:

2. Այնուամենայնիվ, այն ֆիզիկական անձինք, որոնց՝

- 1974 թվականի դեկտեմբերի 31-ից հետո եւ նախքան 1978 թվականի հունվարի 1-ը՝ Բելգիայում, Դանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Լյուքսեմբուրգում, Նիդեռլանդներում եւ Միացյալ Թագավորությունում.

- 1980 թվականի դեկտեմբերի 31-ից հետո եւ նախքան 1984 թվականի հունվարի 1-ը՝ Հունաստանում.

- 1982 թվականի դեկտեմբերի 31-ից հետո եւ նախքան 1986 թվականի հունվարի 1-ը՝ Իսպանիայում եւ Պորտուգալիայում.

- 1989 թվականի հոկտեմբերի 2-ից հետո եւ նախքան 1992 թվականի հունվարի 1-ը՝ նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության տարածքում.

#### ▼M1

- 1994 թվականի դեկտեմբերի 31-ից հետո եւ նախքան 1997 թվականի հունվարի 1-ը՝ Ավստրիայում, Ֆինլանդիայում եւ Շվեդիայում.

#### ▼B

- ազգային կանոնակարգերով նախատեսված համապատասխան դեպքերում՝ առանց մասնագիտական որակավորման մասին ապացույցներ ներկայացնելու թույլատրված է եղել զբաղվել կամ ավտոճանապարհային բեռնափոխադրման կամ ավտոճանապարհային ուղեւորափոխադրման օպերատորի գործունեությամբ կամ

- նշանակված են եղել կազմակերպության կողմից իրականացվող փոխադրումները շարունակաբար եւ արդյունավետորեն կազմակերպելու համար.

պետք է 3 (4) հոդվածում նշված՝ մասնագիտական որակավորման հետ կապված պայմանը բավարարած լինեն նախքան՝

- 1980 թվականի հունվարի 1-ը՝ Բելգիայում, Դանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Լյուքսեմբուրգում, Նիդեռլանդներում եւ Միացյալ Թագավորությունում.

- 1986 թվականի հունվարի 1-ը՝ Հունաստանում.

- 1988 թվականի հունվարի 1-ը՝ Իսպանիայում եւ Պորտուգալիայում.

– 1992 թվականի հուլիսի 1-ը՝ նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության տարածքում.

▼M1

– 1997 թվականի հունվարի 1-ը՝ Ավստրիայում, Ֆինլանդիայում եւ Շվեդիայում:

**"B**

Միեւնոյն պահանջը պետք է կիրառվի 3 (1) հոդվածի երրորդ ենթապարբերության մեջ նշված դեպքում:

▼M1

3. ա) Բոլոր այն կազմակերպությունները, որոնց թույլատրվել է ծավալել ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն մինչ 1999 թվականի հոկտեմբերի 1-ը, պետք է 2001 թվականի հոկտեմբերի 1-ից ոչ ուշ նրանց կողմից այդ ժամանակահատվածում շահագործվող տրանսպորտային միջոցների համակազմի մասով համապատասխանեն 3(3) հոդվածին:

Այդ կազմակերպությունների կողմից պետք է, այնուամենայնիվ, 1999 թվականի հոկտեմբերի 1-ից հետո կատարվեն 3(3) հոդվածով այդ համակազմի ցանկացած համալրման մասով սահմանված պայմանները:

բ) մինչ 1999 թվականի հոկտեմբերի 1-ը 3,5 տոննայից՝ 6 տոննա առավելագույն թույլատրված քաշով տրանսպորտային միջոցներով ավտոճանապարհային բեռնափոխադրման օպերատորի գործունեություն ծավալող կազմակերպությունները պետք է 3(3) հոդվածով սահմանված պայմաններին համապատասխանեն 2001 թվականի հոկտեմբերի 1-ից ոչ ուշ:

▼B

### *Հոդված 6*

1. Սույն Հրահանգի հիման վրա ընդունված միջոցների համաձայն՝ անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից կայացված այն որոշումներում, որոնք հանգեցնում են ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեությամբ զբաղվելու համար ներկայացված հայտի մերժմանը, պետք է նշված լինեն այն հիմքերը, որոնց վրա հիմնված են դրանք:

▼M1

Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի իրավասու մարմինները պարբերաբար եւ առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ ստուգեն՝ արդյոք կազմակերպությունները դեռեւս բավարարում են բարի համբավի, ֆինանսական վիճակի եւ մասնագիտական որակավորման վերաբերյալ պահանջները:

Ստուգման պահի դրությամբ ֆինանսական վիճակի մասով պահանջը բավարարված չլինելու դեպքում իրավասու մարմինները, երբ կազմակերպության տնտեսական մյուս պայմանները թույլ են տալիս ենթադրել՝ հիմնվելով ֆինանսական ծրագրի վրա, որ ֆինանսական վիճակի հետ կապված պահանջները կարող են կանխատեսելի ապագայում կրկին հաստատուն կերպով բավարարվել, կարող են նախազգուշացում տալ մեկ տարուց ոչ ավելի ժամկետով:

▼B

2. Անդամ պետությունները հետեւում են, որպեսզի իրավասու մարմինները հետ վերցնեն ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն ծավալելու թույլտվությունն այն դեպքում, երբ նրանք որոշում են, որ այլեւս չեն բավարարվում 3 (1) (ա), (բ) կամ (գ) կետերում նշված պայմանները: Այդ դեպքում, սակայն, նրանք բավականաչափ ժամանակ են տալիս փոխարինողի նշանակման համար:

3. Անդամ պետությունները հետեւում են, որպեսզի սույն Հրահանգով կարգավորվող կազմակերպությունները 1–ին եւ 2–րդ պարբերություններում նշված որոշումների առնչությամբ կարողանան պատշաճ միջոցներով պաշտպանել իրենց շահերը:

*Հոդված 7*

1. Այն դեպքում, երբ ավտոճանապարհային բեռնափոխադրումները կամ ավտոճանապարհային ուղեւորափոխադրումները կարգավորող կանոնների նկատմամբ իրավախախտումները կատարվել են ավտոճանապարհային փոխադրումների ոչ ռեզիդենտ օպերատորի կողմից եւ որը կարող էր հանգեցնել ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն իրականացնելու համար տրված թույլտվությունը հետ վերցնելուն, ապա անդամ պետություններն այն անդամ պետությանը, որտեղ հիմնադրվել է այդ օպերատորը, տրամադրում են իրենց ունեցած այն ամբողջ տեղեկատվությունը, որը վերաբերում է այդ իրավախախտումներին եւ իրենց կողմից սահմանված պատժամիջոցներին:

▼M1 \_\_\_\_\_



▼B

2. Անդամ պետությունները պետք է միմյանց փոխօգնություն առաջարկեն սույն Հրահանգի կիրառման նպատակով:

## ԲԱԺԻՆ II

Դիպլոմների, վկայականների եւ որակավորումների մասին վկայող այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչումը

### Հոդված 8

1. Անդամ պետությունները սույն Հրահանգում նշված գործունեության տեսակների առնչությամբ պետք է ձեռնարկեն հիմնադրման ազատության սահմանափակումների վերացման մասին ընդհանուր ծրագրի I բաժնում (7) նշված ֆիզիկական անձանց եւ կազմակերպությունների՝ իրենց տարածքներում հիմնադրվելու վերաբերյալ սույն Հրահանգով սահմանված միջոցներ:

2. Չհակասելով 3-րդ եւ 4-րդ պարբերություններին՝ ընդունող անդամ պետությունը ավտոճանապարհային փոխադրման օպերատորի գործունեություն ծավալելը թույլատրելու նպատակով՝ որպես բարի համբավի բավարար ապացույց է ընդունում դատարանի արձանագրության քաղվածքը, կամ դրա բացակայության դեպքում՝ ավտոճանապարհային փոխադրումների օպերատորի ծագման երկրի կամ այն երկրի, որտեղից ժամանել է նա, դատական կամ վարչական իրավասու մարմնի կողմից տրված համարժեք փաստաթուղթը, որը վկայում է այն մասին, որ այդ պահանջները բավարարված են:

3. Այն դեպքում, երբ ընդունող անդամ պետությունն իր քաղաքացիների համար սահմանում է բարի համբավի վերաբերյալ որոշ պահանջներ եւ երբ այդ պահանջները կատարված լինելու մասին վկայող ապացույցներ հնարավոր չէ ձեռք բերել 2-րդ պարբերության մեջ նշված փաստաթղթից, ապա այդ պետությունը մյուս անդամ պետությունների քաղաքացիների առնչությամբ որպես բավարար ապացույց պետք է ընդունի օտարերկրյա քաղաքացու ծագման երկրի կամ այն երկրի, որտեղից ժամանել է օտարերկրյա քաղաքացին, դատական կամ վարչական իրավասու մարմնի կողմից տրված հավաստագիրը, որտեղ նշված է, որ տվյալ պահանջները բավարարված են: Նման հավաստագրերը պետք է վերաբերեն ընդունող երկրի կողմից կարելու համարվող հատուկ փաստերի:

4. Այն դեպքում, երբ օտարերկրյա քաղաքացու ծագման երկիրը կամ այն երկիրը, որտեղից ժամանել է օտարերկրյա քաղաքացին, չի տալիս 2-րդ եւ 3-րդ պարբերությունների համաձայն պահանջվող փաստաթուղթը, ապա նման փաստաթուղթը կարող է փոխարինվել համապատասխան անձի կողմից՝ տվյալ անձի ծագման երկրի կամ այն երկրի, որտեղից նա ժամանել է, իրավասու դատական կամ վարչական մարմնի, կամ համապատասխան դեպքում, նոտարի առջեւ երդմամբ արված հայտարարությամբ կամ հանդիսավոր հայտարարությամբ, այդ մարմինը կամ նոտարն այնուհետ տալիս է երդմամբ արված հայտարարության կամ հանդիսավոր հայտարարության իսկությունը հաստատող հավաստագիր:

2-րդ եւ 3-րդ պարբերությունների համաձայն տրված փաստաթղթերը չպետք է ընդունվեն դրանց տրամադրման ամսաթվից ավելի քան երեք ամիս անց ներկայացվելու դեպքում: Այս պայմանը կիրառվում է նաեւ 4-րդ պարբերության համաձայն արված հայտարարությունների նկատմամբ:

#### *Հոդված 9*

1. Այն դեպքում, երբ ընդունող անդամ պետության կողմից՝ որպես ֆինանսական վիճակի մասին վկայող ապացույց, պահանջվում է հավաստագրի առկայություն, ապա այդ պետությունը, օտարերկրյա քաղաքացու ծագման երկրի կամ այն երկրի, որտեղից նա ժամանել է, բանկերի կամ այդ երկրի կողմից նշանակված այլ ֆինանսական մարմինների կողմից տրված համապատասխան հավաստագրերը պետք է դիտի որպես իր սեփական տարածքում տրված հավաստագրերին համարժեք փաստաթղթեր:

2. Այն դեպքում, երբ ընդունող անդամ պետությունն իր քաղաքացիների համար սահմանում է ֆինանսական վիճակի վերաբերյալ որոշ պահանջներ, եւ երբ այդ պահանջների կատարված լինելու մասին վկայող ապացույցներ հնարավոր չէ ձեռք բերել 1-ին պարբերության մեջ նշված փաստաթղթից, ապա այդ պետությունը մյուս անդամ պետությունների քաղաքացիների առնչությամբ՝ որպես բավարար ապացույց, պետք է ընդունի օտարերկրյա քաղաքացու ծագման երկրի կամ այն երկրի, որտեղից ժամանել է օտարերկրյա քաղաքացին, դատական կամ վարչական իրավասու մարմնի կողմից տրված հավաստագիրը, որտեղ նշված է, որ տվյալ պահանջները բավարարված են: Նման հավաստագիրը պետք է վերաբերի ընդունող երկրի կողմից կարելի համարվող հատուկ փաստերի:

## Հոդված 10

1. 1990 թվականի հունվարի 1-ից, ինչպես նշված է 3 (4) հոդվածի չորրորդ պարբերության մեջ, անդամ պետությունները մեկ այլ անդամ պետության կողմից տրված վկայականները ճանաչում են որպես մասնագիտական որակավորման մասին վկայող բավարար ապացույց:

Հունաստանում՝ մինչ 1981 թվականի հունվարի 1-ը, կամ այլ անդամ պետությունում՝ մինչ 1975 թվականի հունվարի 1-ը, ազգային եւ (կամ) միջազգային ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում ավտոճանապարհային բեռնափոխադրման կամ ավտոճանապարհային ուղեւորափոխադրման օպերատորի գործունեությամբ զբաղվելու թույլտվություն ստացած կազմակերպությունների դեպքում եւ երբ տվյալ կազմակերպությունները ընկերություններ կամ ֆիրմաներ են՝ Պայմանագրի 58-րդ հոդվածի իմաստով, անդամ պետությունները՝ որպես մասնագիտական որակավորման մասին վկայող բավարար ապացույց են ընդունում վկայականները, որոնցում նշված է, որ տվյալ գործունեությունը անդամ պետություններից որեւիցե մեկում փաստացիորեն իրականացվել է երեք տարի ժամանակահատվածով: Այդ գործունեությունը չպետք է դադարեցված լինի վկայականի ներկայացման ամսաթվից ավելի քան հինգ տարի առաջ:

Իրավաբանական անձի դեպքում այն վկայականը, որի մեջ նշված է, որ գործունեությունը փաստացիորեն իրականացվել է, տրվում է ֆիզիկական անձանցից որեւիցե մեկի անունով, ով իրականում զբաղվել է կազմակերպության փոխադրման գործունեության իրականացմամբ:

3. Մինչ 1999 թվականի հոկտեմբերի 1-ը ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին՝ մինչեւ այդ ժամկետը գործող դրույթների համաձայն որպես նրանց մասնագիտական որակավորման մասին վկայող ապացույց տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրվող վկայականներին համարժեք փաստաթղթեր:

### **▼Ա1**

4. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Զեխիայի Հանրապետության անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են՝

– միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորներին՝ թիվ 150/2000 Sb. ակտով փոփոխված՝ «Ճանապարհային տրանսպորտի մասին» թիվ 111/1994 Sb. ակտի համաձայն՝ 2000 թվականի հուլիսի 1-ից հետո:

- ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորներին՝ թիվ No 150/2000 Sb. ակտով փոփոխված՝ «Ճանապարհային տրանսպորտի մասին» թիվ 111/1994 Sb. ակտի համաձայն՝ 2003 թվականի հունվարի 1-ից հետո:

5. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Էստոնիայի անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են՝

- միջազգային եւ ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման օպերատորներին՝ «Ճանապարհային տրանսպորտի մասին» 2000 թվականի հունիսի 7-ի ակտի համաձայն (RT I 2000, 54, 346)՝ 2000 թվականի հոկտեմբերի 1-ից հետո.

- միջազգային եւ ներքին ավտոճանապարհային ուղեւորափոխադրման օպերատորներին՝ «Հասարակական տրանսպորտի մասին» 2000 թվականի հունվարի 26-ի ակտի համաձայն (RT I 2000, 10, 58)՝ 2000 թվականի հոկտեմբերի 1-ից հետո:

6. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Լատվիայի անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են՝

-միջազգային եւ ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման ու ուղեւորափոխադրման օպերատորներին՝ «Ավտոճանապարհային փոխադրումների մասին» օրենքի ու «Ազգային եւ միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրման ու ուղեւորափոխադրման ոլորտում մասնագիտական որակավորման վկայականներ շնորհող քննական հանձնաժողովի մասին» Տրանսպորտի նախարարության 2001 թվականի փետրվարի 6-ի թիվ 9 կանոնակարգի համաձայն՝ 2001 թվականի ապրիլի 1-ից հետո:

7. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Լիտվայի անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են՝

-միջազգային եւ ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման ու ուղեւորափոխադրման օպերատորներին՝ «Ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց քննություն հանձնելու մասին» Տրանսպորտի եւ

հաղորդակցության նախարարի 2003 թվականի հունվարի 13-ի թիվ 3-20 հրամանի համաձայն՝ 2003 թվականի հունվարի 17-ից հետո:

8. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Հունգարիայի անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են՝

–միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրման օպերատորներին՝ Նախարարների խորհրդի թիվ 89/1988 (XII. 20.) MT որոշումը փոփոխող՝ Կառավարության թիվ 20/1991 (I. 29.) Korm. որոշման համաձայն՝ 1991 թվականի փետրվարի 1-ից հետո.

–ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման օպերատորներին՝ Նախարարների խորհրդի թիվ 89/1988 (XII. 20.) MT որոշումը փոփոխող՝ Կառավարության թիվ 31/1995 (III.24.) Korm. որոշման համաձայն՝ 1995 թվականի ապրիլի 1-ից հետո.

–ավտոճանապարհային բեռնափոխադրման օպերատորներին՝ Նախարարների խորհրդի թիվ 89/1988 (XII. 20.) MT որոշումը փոփոխող՝ Կառավարության թիվ 68/2001 (IV.20.) Korm. որոշման համաձայն՝ 2001 թվականի մայիսի 1-ից հետո.

–Ավտոճանապարհային ուղեւորափոխադրման օպերատորներին՝ Տրանսպորտի եւ ջրային ռեսուրսների կառավարման նախարարի թիվ 49/2001(XII.22.) KöViM որոշման համաձայն՝ 2002 թվականի հունվարի 1-ից հետո:

9. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Լեհաստանի անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են միջազգային եւ ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման ու ուղեւորափոխադրման օպերատորներին՝ «Ճանապարհային տրանսպորտի մասին» 2001 թվականի սեպտեմբերի 6-ի օրենքի համաձայն՝ 2002 թվականի հունվարի 1-ից հետո:

10. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Սլովակիայի անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են միջազգային եւ ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորներին՝

«Ճանապարհային տրանսպորտի մասին» թիվ 168/1996 ակտի համաձայն՝ փոփոխված 2002 թվականի օգոստոսի 19-ին՝ 2002 թվականի սեպտեմբերի 1-ից հետո:

### ▼Մ3

11. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Բուլղարիայի անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են՝

– միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորներին՝ «Ավտոճանապարհով ուղեւորների եւ բեռների միջազգային փոխադրման մասին» 2002 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 11 հրամանագրի համաձայն (2002 թվականի նոյեմբերի 19-ի Պաշտոնական տեղեկագիր թիվ 108 )՝ 2002 թվականի նոյեմբերի 19-ից հետո.

– ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորներին՝ «Բուլղարիայի տարածքում հասարակական ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների մասին» 1999 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 33 հրամանագրի համաձայն՝ 2002 թվականի հոկտեմբերի 30-ին փոփոխված, (2002 թվականի նոյեմբերի 19-ի Պաշտոնական տեղեկագիր թիվ 108 )՝ 2002 թվականի նոյեմբերի 19-ից հետո:

12. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից՝ ավտոճանապարհային փոխադրման օպերատորներին մինչ Ռումինիայի անդամակցության պահը տրված վկայականները համարվում են սույն Հրահանգի դրույթների համաձայն տրված վկայականներին համարժեք փաստաթղթեր միայն այն դեպքում, երբ դրանք տրվել են միջազգային եւ ներքին ավտոճանապարհային բեռնափոխադրման ու ուղեւորափոխադրման օպերատորներին՝ «Ավտոճանապարհային փոխադրումները մշտապես եւ արդյունավետորեն համակարգող անձանց նշանակման, վերապատրաստման եւ մասնագիտական որակավորման հավաստագրման մասին» Տրանսպորտի նախարարի 1999 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 761 հրամանի համաձայն՝ 2000 թվականի հունվարի 28-ից ի վեր:

### ▼M1

### *Հոդված 10ա*

Անդամ պետությունները նախատեսում են պատժամիջոցների համակարգ՝ սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքերում եւ ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցներն այդ պատժամիջոցների կիրառումն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք եւ տարհամոզիչ:

### *Հոդված 10բ*

1999 թվականի հոկտեմբերի 1-ից հետո անդամ պետությունները որպես մասնագիտական որակավորման մասին վկայող բավարար ապացույց են ճանաչում ևս հավելվածում նշված վկայականի ձեւին համապատասխանող եւ ցանկացած այլ անդամ պետության կողմից այդ նպատակով նշանակված գերատեսչության կամ մարմնի կողմից տրված վկայականները:

#### **▼Մ3**

Մասնագիտական որակավորման վկայականները, որոնց մասին նշված է 10-րդ հոդվածի 4-րդ եւ 12-րդ պարբերությունների մեջ, կարող են ևս հավելվածում նշված վկայականի ձեւով վերստին տրվել համապատասխան անդամ պետությունների կողմից:

#### **▼B**

## **ԲԱԺԻՆ III**

### **Եզրափակիչ դրույթներ**

### *Հոդված 11*

Անդամ պետությունները նշանակում են 8 (2) եւ 9-րդ հոդվածներում նշված փաստաթղթերի, ինչպես նաեւ 10 (2) հոդվածում նշված վկայականի տրամադրման համար իրավասու գերատեսչություններ եւ մարմիններ: Նրանք դրա մասին տեղեկացնում են մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին:

### Հոդված 12

8-րդ հոդվածից մինչ 11-րդ հոդվածները կիրառվում են նաեւ անդամ պետությունների այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր «Համայնքի տարածքում աշխատողների ազատ տեղաշարժի մասին» Խորհրդի 1968 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1612/68 (ԵՏՀ) կանոնակարգի (\_\_\_8\_\_\_) համաձայն, ավտոճանապարհային բեռնափոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորի գործունեություն են ծավալում՝ որպես աշխատող:

### Հոդված 13

1. Անդամ պետությունները Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո II հավելվածի Բ մասում թվարկված ամսաթվերից ոչ ուշ ձեռնարկում են սույն Հրահանգի դրույթներին համապատասխանության ապահովման ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթներին տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

### Հոդված 14

Սույնով ուժը կորցրած են ճանաչվում II հավելվածի Ա մասում թվարկված հրահանգները՝ չսահմանափակելով II հավելվածի Բ մասում նշված իրականացման կամ կիրարկման ժամկետների առնչությամբ անդամ պետությունների պարտավորությունները:

Ուժը կորցրած հրահանգներին արված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին արվող հղումներ եւ ընթերցվում են ըստ III հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի:

### Հոդված 15

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

▼M1



**I.3(4) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

Անդամ պետությունների կողմից մասնագիտական որակավորման պաշտոնական ճանաչման համար հաշվի առնվող գիտելիքները պետք է համապատասխանաբար ներառեն ավտոճանապարհային բեռնափոխադրումների եւ ուղեւորափոխադրումների վերաբերյալ առնվազն ներքոնշյալ առարկաները: Ավտոճանապարհային բեռնափոխադրման եւ ուղեւորափոխադրման հայտատու օպերատորները այդ առարկաների վերաբերյալ պետք է ունենան գիտելիքների եւ պրակտիկ կարողությունների այնպիսի մակարդակ, որն անհրաժեշտ է՝ փոխադրող կազմակերպության կառավարման համար:

Գիտելիքների նվազագույն մակարդակը, ինչպես նշված է ներքեւում, չպետք է լինի 85/368/ԵՏՀ որոշման (9) հավելվածով սահմանված ուսուցման ծրագրի 3-րդ մակարդակից ցածր, որին հասնում են պարտադիր կրթության ստացման ընթացքում եւ որը լրացուցիչ կերպով կարող է ներառել կամ մասնագիտական ուսուցում եւ լրացուցիչ տեխնիկական ուսուցում կամ միջնակարգ դպրոցի համար նախատեսված տեխնիկական ուսուցում:

**Ա. Քաղաքացիական իրավունք**

**Ավտոճանապարհային բեռնափոխադրում եւ ուղեւորափոխադրում**

Հայտատուն պետք է, մասնավորապես՝

1. ծանոթ լինի ավտոճանապարհային փոխադրումների դեպքում օգտագործվող պայմանագրերի հիմնական տեսակներին եւ դրանցից հետեւող իրավունքներին ու պարտավորություններին.
2. կարողանա բանակցել իրավականորեն վավեր փոխադրման պայմանագրի՝ մասնավորապես փոխադրման վերաբերյալ պայմանների շուրջ.

Ավտոճանապարհային բեռնափոխադրում

3. կարողանա քննել տրանսպորտային փոխադրման ընթացքում ապրանքների կորստի կամ վնասվելու դեպքերի փոխհատուցման առնչությամբ իր պատվիրատուի կողմից ներկայացված հայցը եւ հասկանա՝ ինչպես է նմանատիպ հայցն ազդում իր պայմանագրային պարտավորությունների վրա.

4. ծանոթ լինի ավտոճանապարհով բեռների միջազգային փոխադրումների մասին պայմանագրի վերաբերյալ ԱԲԿ կոնվենցիայից բխող կանոններին եւ պարտավորություններին.

#### **Ավտոճանապարհային ուղեւորափոխադրում**

5. կարողանա քննել տրանսպորտային փոխադրման ընթացքում պատահարի հետեւանքով ուղեւորներին հասցված վնասվածքների կամ նրանց ուղեբեռի վնասվելու դեպքերի կամ ուշացումների հետ կապված փոխհատուցման առնչությամբ իր պատվիրատուի կողմից ներկայացված հայցը եւ հասկանա՝ ինչպես է նմանատիպ հայցն ազդում իր պայմանագրային պարտավորությունների վրա:

### **Բ. Առեւտրային իրավունք**

#### **Ավտոճանապարհային բեռնափոխադրում եւ ուղեւորափոխադրում**

Հայտատուն պետք է, մասնավորապես՝

1. ծանոթ լինի առեւտրով զբաղվելու համար սահմանված պայմաններին եւ ընթացակարգերին, փոխադրման օպերատորների վրա դրված ընդհանուր պարտավորություններին (գրանցում, գրանցամատյանի վարում եւ այլն) եւ սնանկության հետեւանքներին.
2. համապատասխան գիտելիքներ ունենա առեւտրային ընկերության տարբեր տեսակների եւ նրանց կանոնադրությունն ու գործունեությունը կարգավորող կանոնների վերաբերյալ:

### **Գ. Սոցիալական ապահովության իրավունք**

#### **Ավտոճանապարհային բեռնափոխադրում եւ ուղեւորափոխադրում**

Հայտատուն պետք է, մասնավորապես՝

1. ծանոթ լինի սոցիալական տարբեր այնպիսի հաստատությունների դերին եւ գործառույթներին, որոնք առնչվում են ավտոճանապարհային փոխադրումներին (արհեստակցական միություններ, կազմակերպությունների խորհուրդներ, արհմիության ներկայացուցիչներ, աշխատանքային պայմանների վերահսկման տեսուչներ եւ այլն).
2. ծանոթ լինի գործատուների սոցիալական ապահովությանն առնչվող պարտավորություններին.

3. ծանոթ լինի ավտոճանապարհային փոխադրման կազմակերպությունների կողմից աշխատանքի վերցված աշխատողների տարբեր կատեգորիաների համար նախատեսված աշխատանքային պայմանագրերը կարգավորող կանոններին (պայմանագրի ձեւ, կողմերի պարտավորություններ, աշխատանքային պայմաններ եւ աշխատաժամեր, վճարվող արձակուրդ, վարձատրություն, պայմանագրի խախտում եւ այլն)։

4. ծանոթ լինի թիվ 3820/85 (10) (ԵՏՀ) կանոնակարգի եւ թիվ 3821/85 (11) (ԵՏՀ) կանոնակարգի դրոյթներին եւ այդ կանոնակարգերի իրականացման համար նախատեսված պրակտիկ միջոցառումներին։

#### **Դ. Հարկաբյուջետային իրավունք**

##### **Ավտոճանապարհային բեռնափոխադրում եւ ուղեւորափոխադրում**

Հայտատուն պետք է, մասնավորապես, ծանոթ լինի հետեւյալները կարգավորող կանոններին՝

1. փոխադրման ծառայությունների նկատմամբ կիրառվող՝ ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)։
2. ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ կիրառվող հարկ։
3. ավտոճանապարհային բեռնափոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներ եւ ճանապարհն օգտագործելու համար գանձվող գումարներ։
4. Եկամտահարկ։

#### **Ե. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության վարում եւ ֆինանսական կառավարում**

##### **Ավտոճանապարհային բեռնափոխադրում եւ ուղեւորափոխադրում**

Հայտատուն պետք է մասնավորապես՝

1. ծանոթ լինի չեկերի, փոխանցելի մուրհակների, հասարակ մուրհակների, վարկային քարտերի եւ վճարման այլ եղանակների կամ մեթոդների կիրառման վերաբերյալ օրենքներին ու գործելակերպերին։
2. ծանոթ լինի վարկի տարբեր տեսակներին (բանկի կողմից տրամադրվող վարկ, փաստաթղթավորված վարկ, երաշխիքային ավանդներ, գրավադրում, լիզինգ,

վարձակալություն, ֆակտորինգ եւ այլն) ու դրանցից բխող վճարներին եւ պարտավորություններին.

3. իմանա՝ ինչ է հաշվապահական հաշվեկշիռը եւ ինչպես է այն մեկնաբանվում.

4. կարողանան կարդալ եւ մեկնաբանել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը.

5. կարողանա գնահատել կազմակերպության շահութաբերության մակարդակը եւ ֆինանսական վիճակը, մասնավորապես, հիմնվելով ֆինանսական գործակիցների վրա.

6. կարողանա բյուջետային ծրագիր կազմել.

7. ծանոթ լինի իր կազմակերպության ծախսերի տարբեր տարրերին (ֆիքսված ծախսեր, փոփոխական ծախսեր, շրջանառու միջոցներ, արժեզրկում եւ այլն) ու կարողանա հաշվել յուրաքանչյուր՝ տրանսպորտային միջոցի, կիլոմետրի, ուղեւորության, տոննայի համար հաշվարկվող ծախսերը.

8. կարողանա կազմել կազմակերպության ամբողջ աշխատակազմին վերաբերող կազմակերպական սխեմա ու մշակել աշխատանքային պլան եւ այլն.

9. ծանոթ լինի շուկայավարման, հրապարակայնության եւ հասարակական կապերի ոլորտներում կիրառվող սկզբունքներին, այդ թվում՝ փոխադրման ծառայությունների ծավալի մեծացմանը, հաճախորդների մասին տվյալների բազայի պատրաստմանը եւ այլն.

10. ծանոթ լինի ավտոճանապարհային փոխադրմանն առնչվող ապահովագրության տարբեր տեսակներին (պարտավորություններ, պատահական վնասվածքներից ապահովագրում/կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի եւ ձեռքի ուղեբեռի ապահովագրություն) եւ դրանց հետ կապված երաշխիքներին եւ դրանցից բխող պարտավորություններին.

11. ծանոթ լինի էլեկտրոնային տվյալների փոխանցման՝ ավտոճանապարհային փոխադրման ոլորտում կիրառվող ծրագրերին.

Ավտոճանապարհային բեռնափոխադրում

12. կարողանա կիրառել ավտոճանապարհային բեռնափոխադրման ծառայությունների դեպքում հաշիվ-ապրանքագրերը ներկայացնելու ընթացակարգը կարգավորող կանոնները եւ գիտենա առետրային տերմինների իմաստն ու նշանակությունը.

13. ծանոթ լինի օժանդակ տրանսպորտային ծառայությունների տարբեր կատեգորիաներին, դրանց դերին, գործառույթներին եւ համապատասխան դեպքում՝ դրանց կարգավիճակին.

Ավտոճանապարհային ուղեւորափոխադրում

14. կարողանա կիրառել հասարակական եւ մասնավոր ուղեւորափոխադրման սակագների եւ գների սահմանման ընթացակարգը կարգավորող կանոնները.

15. կարողանա կիրառել ավտոճանապարհային ուղեւորափոխադրման ծառայությունների դեպքում հաշիվ-ապրանքագրերը ներկայացնելու ընթացակարգը կարգավորող կանոնները:

## **2. Մուտքը շուկա**

### **Ավտոճանապարհային բեռնափոխադրում եւ ուղեւորափոխադրում**

Հայտատուն պետք է, մասնավորապես՝

1. ծանոթ լինի վարձատրության կամ փոխհատուցման դիմաց իրականացվող ավտոճանապարհային փոխադրման, արդյունաբերական նպատակներով օգտագործվող տրանսպորտային միջոցի վարձակալման եւ ենթապայմանագրերի կնքման ընթացակարգերը կարգավորող աշխատանքային կանոնակարգերին եւ, մասնավորապես, գործունեության կազմակերպումը, գործունեության ծավալումը թույլատրելի, ներհամայնքային եւ Համայնքի տարածքից դուրս ավտոճանապարհային փոխադրման իրականացումը, ստուգման եւ պատժամիջոցների սահմանումը կարգավորող կանոններին.

2. ծանոթ լինի ավտոճանապարհային փոխադրումներ իրականացնող կազմակերպության հիմնադրման կանոններին.

3. ծանոթ լինի ավտոճանապարհային փոխադրման ծառայություններ իրականացնելու համար պահանջվող տարբեր փաստաթղթերին եւ կարողանա ներմուծել ստուգման ընթացակարգեր՝ նպատակաուղղված փոխադրման յուրաքանչյուր գործունեության եւ, մասնավորապես, տրանսպորտային միջոցի, վարորդի, ապրանքների եւ ձեռքի ուղեբեռի վերաբերյալ հաստատված փաստաթղթերի առկայության ապահովմանն ինչպես տրանսպորտային միջոցի մեջ, այնպես էլ կազմակերպության ներսում.

Ավտոճանապարհային բեռնափոխադրում

4. ծանոթ լինի ավտոճանապարհային բեռնափոխադրման ծառայությունների շուկայի կազմակերպման, բեռների փոխադրման եւ նյութատեխնիկական ապահովման վերաբերյալ կանոններին.

5. ծանոթ լինի սահմանային ձեւակերպումներին, հարկային փաստաթղթերի եւ միջազգային ճանապարհային փոխադրումների գրքույկների դերին ու գործողության ոլորտին, ինչպես նաեւ դրանց կիրառման հետեւանքով առաջացող պարտավորություններին եւ պարտականություններին.

### **Ավտոճանապարհային ուղեւորափոխադրում**

6. ծանոթ լինի ավտոճանապարհային ուղեւորափոխադրման շուկայի կազմակերպման կանոններին.

7. ծանոթ լինի ավտոճանապարհային ուղեւորափոխադրման ծառայությունների ներմուծման կանոններին եւ կարողանա կազմել փոխադրման պլաններ:

## **E. Տեխնիկական ստանդարտներ եւ շահագործման հայեցակետեր**

### **Ավտոճանապարհային բեռնափոխադրում եւ ուղեւորափոխադրում**

Հայտատուն պետք է, մասնավորապես՝

1. ծանոթ լինի անդամ պետություններում շահագործվող տրանսպորտային միջոցների քաշերի եւ չափսերի վերաբերյալ կանոններին եւ այն ընթացակարգերին, որոնց հետեւում են թույլատրվածից ավելի բեռնվածության դեպքում, որը բացառություն է այդ կանոններից.

2. կարողանան ընտրել այնպիսի տրանսպորտային միջոցներ եւ դրանց բաղկացուցիչ մասեր (հենասարք, շարժիչ, փոխանցման ու արգելակման համակարգեր եւ այլն), որոնք համապատասխանում են կազմակերպության կարիքներին.

3. ծանոթ լինի այդ տրանսպորտային միջոցների տեսակի հաստատմանը, գրանցմանը եւ տեխնիկական զննմանը վերաբերող ձեւակերպումներին.

4. հասկանա՝ ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն շարժիչով տրանսպորտային միջոցի առաջացրած աղմուկը նվազեցնելու եւ դրանից դեպի մթնոլորտ արտանետումների հետեւանքով օդի աղտոտման դեմ պայքարելու համար.

5. կարողանա կազմել տրանսպորտային միջոցների եւ դրանց սարքավորումների տեխնիկական սպասարկման պարբերական պլաններ.

## **Ավտոճանապարհային բեռնափոխադրում**

6. ծանոթ լինի բեռների փոխադրման եւ բեռնման հարմարանքների տարբեր տեսակներին (հետ բացվող կողեզեր, կոնտեյներներ, տակդիրներ) ու կարողանա ներմուծել ընթացակարգեր եւ ցուցումներ տալ ապրանքների բեռնման ու բեռնաթափման վերաբերյալ (բեռնվածքի բաշխում, դարսում, ուղեկապում ու փակում եւ այլն).
7. ծանոթ լինի շղթայական եւ քարշակային համակցված փոխադրման տարբեր եղանակներին.
8. կարողանա ընթացակարգեր իրականացնել վտանգավոր բեռների եւ թափոնների փոխադրման մասին կանոններին, եւ հատկապես 94/55/ԵՀ (12), 96/35/ԵՀ (13) հրահանգներից եւ թիվ 259/93 (ԵՏՀ) կանոնակարգից (14) բխող կանոններին համապատասխանելու նպատակով.
9. կարողանա ընթացակարգեր իրականացնել՝ արագ փչացող սննդամթերքների փոխադրման վերաբերյալ կանոններին եւ հատկապես «Արագ փչացող սննդամթերքների միջազգային փոխադրման ու նման փոխադրման համար օգտագործվող հատուկ սարքավորումների մասին» համաձայնագրից բխող կանոններին համապատասխանելու նպատակով.
10. կարողանա ընթացակարգեր իրականացնել՝ կենդանի կենդանիների փոխադրման վերաբերյալ կանոններին համապատասխանելու նպատակով:

## **Ը. Ճանապարհային անվտանգություն**

### **Ավտոճանապարհային բեռնափոխադրում եւ ուղեւորափոխադրում**

Հայտատուն պետք է, մասնավորապես՝

1. գիտենա՝ ինչ որակավորումներ են պահանջվում վարորդների համար (վարորդական վկայական, բժշկական տեղեկանքներ, պիտանելիության վերաբերյալ հավաստագրեր եւ այլն).
2. կարողանա անհրաժեշտ քայլեր ձեռնարկել, որպեսզի վարորդները պահպանեն երթելիության կանոնները, տարբեր անդամ պետություններում գործող արգելքները եւ սահմանափակումները (արագության սահմանափակում, առաջնահերթություններ, սպասման եւ կայանման սահմանափակումներ, լույսերի օգտագործում, ճանապարհային նշաններ եւ այլն).
3. կարողանա կազմել վարորդներին առնչվող ցուցումներ, որոնց նպատակը վարորդների կողմից ավտոտրանսպորտային միջոցների, դրանց սարքավորումների եւ բեռների հետ կապված

անվտանգության պահանջների կատարումը ստուգելը, ինչպես նաև ձեռնարկվելիք կանխարգելիչ միջոցներին վերաբերող ցուցումներ տալն է.

4. կարողանա սահմանել այնպիսի ընթացակարգեր, որոնց պետք է հետեւել պատահարի դեպքում եւ կարողանա իրականացնել պատահարների ու երթեւեկության կանոնների լուրջ խախտումները եւ դրանց կրկնությունը կանխարգելող համապատասխան ընթացակարգեր.

### **Ավտոճանապարհային ուղեւորափոխադրում**

5. տարրական գիտելիքներ ունենա անդամ պետությունների ճանապարհային ցանցի կառուցվածքի վերաբերյալ:

## **II. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

1. Անդամ պետությունները կազմակերպում են պարտադիր գրավոր քննություն, որից բացի լրացուցիչ կարող են նախատեսել հավելյալ բանավոր քննություն՝ պարզելու համար՝ արդյոք հայտատու ավտոճանապարհային փոխադրման օպերատորները ձեռք են բերել I մասում թվարկված առարկաների վերաբերյալ գիտելիքների պահանջվող մակարդակ եւ, մասնավորապես, արդյոք նրանք ունեն դրանց վերաբերյալ գործիքների եւ մեթոդների կիրառման, ինչպես նաև գործադիր բնույթի ու համակարգման պարտականությունների կատարման կարողություն:

ա) Պարտադիր գրավոր քննությունը ներառում է հետեւյալ երկու թեստերը՝

– գրավոր հարցեր՝ կամ բազմակի ընտրության հնարավորությամբ (յուրաքանչյուրը չորս հնարավոր պատասխաններով) կամ ուղղակի պատասխան պահանջող եւ կամ այդ երկու համակարգերի համակցմամբ.

– գրավոր վարժություններ/ կոնկրետ դեպքերի ուսումնասիրություն:

Յուրաքանչյուր թեստի նվազագույն տեսողությունը երկու ժամ է:

բ) Բանավոր քննություն կազմակերպվելու դեպքում անդամ պետությունները կարող են նախատեսել, որ դրան մասնակցելը հնարավոր լինի գրավոր քննության բարեհաջող հանձնման դեպքում:



2. Երբ անդամ պետությունները եւս կազմակերպում են բանավոր քննություն, նրանք պետք է երեք թեստերից յուրաքանչյուրի համար նախատեսեն տրվող ամբողջ միավորների նվազագույնը՝ 25 %-ի եւ առավելագույնը՝ 40 %-ի չափով միավորների սանդղակ:

Երբ անդամ պետությունները կազմակերպում են միայն գրավոր քննություն, նրանք պետք է թեստերից յուրաքանչյուրի համար նախատեսեն տրվող ամբողջ միավորների նվազագույնը՝ 40 %-ի եւ առավելագույնը՝ 60 %-ի չափով միավորների սանդղակ:

3. Բոլոր թեստերից հայտատուները պետք է ստանան տրվող ամբողջ միավորների առնվազն 60 %-ի նկատմամբ հաշվարկված միջին թվով միավորներ՝ ցանկացած թեստից ստանալով 50 %-ից ոչ պակաս հնարավոր միավորներ : Անդամ պետությունը միայն մեկ թեստի համար կարող է այդ նիշը 50 %-ից իջեցնել 40 %-ի:

▼M1

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

(Դեղնաշագանակագույն ամուր թուղթ– DIN A4 ձեռագրի)

(Պաշտոնական լեզվով (լեզուներով) կամ վկայականը տրամադրող անդամ պետության պաշտոնական լեզուներից որեւէ մեկով շարադրվող տեքստ)

Համապատասխան անդամ պետության տարբերակիչ խորհրդանիշ (¹)

Իրավասու գերատեսչության կամ մարմնի անվանումը (²)

**ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ (³) ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՄԱՆ (ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ) (³) ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ**

Թիվ...

Մենք (²) ....., սույնով հաստատում ենք,

ա) ..... որ (⁴).....

ծնված հետեւյալ վայրում ..... նշված ամսաթվին.....

հանձնել է քննական թեստերը (տարի'....., սեսիա'.....) (⁵) կազմակերպված ազգային (եւ միջազգային) (³) ավտոճանապարհային բեռնափոխադրման (ուղեւորափոխադրման) ոլորտի մասնագիտական որակավորման վկայական շնորհելու նպատակով

համաձայն՝ ..... (⁶)

.....

բ) որ (ա) կետում նշված անձը որակավորված է ավտոճանապարհային բեռնափոխադրում (ավտոճանապարհային ուղեւորափոխադրում) իրականացնող կազմակերպությունում մասնագիտական գործունեություն ծավալելու համար՝

–գրադվելով միայն ազգային փոխադրումներով <sup>(3)</sup>.

–գրադվելով միջազգային փոխադրումներով <sup>(3)</sup>:

Սույն վկայականը «Ավտոճանապարհային փոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորի գործունեության ծավալումը թույլատրելու եւ այդ օպերատորներին ազգային ու միջազգային փոխադրումների ոլորտում գործունեություն իրականացնելու իրավունք տալու նպատակով դիպլոմների, վկայականների եւ որակավորումների մասին վկայող այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին» Խորհրդի 1996 թվականի ապրիլի 29–ի 96/26/ԵՀ հրահանգի 10(1) հոդվածում նշված մասնագիտական որակավորման մասին վկայող բավարար ապացույց է:

Տրված՝.....

ամսաթիվ.....

.....  
...(7)

▼M4

▼B

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՄԱՍ Ա

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

(նշված՝ 14-րդ հոդվածում)

– 74/561/ԵՏՀ հրահանգ

– 74/562/ԵՏՀ հրահանգ

– 77/796/ԵՏՀ հրահանգ

եւ դրանց հետագա փոփոխությունները՝

– 80/1178/ԵՏՀ հրահանգ

– 80/1179/ԵՏՀ հրահանգ

– 80/1180/ԵՏՀ հրահանգ

– 85/578/ԵՏՀ հրահանգ

– 85/579/ԵՏՀ հրահանգ

– 89/438/ԵՏՀ հրահանգ

–Թիվ 3572/90 կանոնակարգի (ԵՏՀ)՝ միայն 1-ին եւ 2-րդ հոդվածները

ՄԱՍ Բ

Հրահանգ	Իրականացման կամ կիրարկման վերջնաժամկետը
74/561/ԵՏՀ (ՊՏ թիվ L 308, 19.11.1974թ., էջ 18)	հունվարի 1, 1977թ. հունվարի 1, 1978թ.
80/1178/ԵՏՀ (ՊՏ թիվ L 350, 23.12.1980թ., էջ 41)	հունվարի 1, 1981թ.
85/578/ԵՏՀ (ՊՏ թիվ L 372,	հունվարի 1, 1986թ.

31.12.1985թ., էջ 34)	
89/438/ԵՏՀ (ՊՏ թիվ L 212, 22.07.1989թ., էջ 101)	հունվարի 1, 1990թ.
74/562/ԵՏՀ (ՊՏ թիվ L 308, 19.11.1974թ., էջ 23)	հունվարի 1, 1977թ. հունվարի 1, 1978թ.
80/1179/ԵՏՀ (ՊՏ թիվ L 350, 23.12.1980թ., էջ 42)	հունվարի 1, 1981թ.
85/579/ԵՏՀ (ՊՏ թիվ L 372, 31.12.1985թ., էջ 35)	հունվարի 1, 1986թ.
89/438/ԵՏՀ (ՊՏ թիվ L 212, 22.07.1989թ., էջ 101)	հունվարի 1, 1990թ.
77/796/ԵՏՀ (ՊՏ թիվ L 334, 24.12.1977թ., էջ 37)	հունվարի 1, 1979թ.
80/1180/ԵՏՀ (ՊՏ թիվ L 350, 23.12.1980թ., էջ 43)	հունվարի 1, 1981թ.
89/438/ԵՏՀ (ՊՏ թիվ L 212, 22.07.1989թ., էջ 101)	հունվարի 1, 1990թ.

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱԴՅՈՒՍԱԿ

74/561/ԵՏՀ հրահանգ	74/562/ԵՏՀ հրահանգ	89/438/ԵՏՀ հրահանգ	77/796/ԵՏՀ հրահանգ	Սույն հրահանգը
Հոդված 1(1)	Հոդված 1(1)			Հոդված 1(1)
1(2) հոդվածի առաջին պարբերույթ	—			1(2) հոդվածի առաջին պարբերույթ
—	1(2) հոդվածի առաջին պարբերույթ			1(2) հոդվածի, երկրորդ պարբերույթ
1(2) հոդվածի, երկրորդ պարբերույթ	1(2) հոդվածի, երկրորդ պարբերույթ			1(2) հոդվածի, երրորդ պարբերույթ
2 (1) եւ (2) հոդված	—			2 (1) եւ (2) հոդված
—	1(3) հոդված			2(3) հոդված
Հոդված 3	Հոդված 2			Հոդված 3
Հոդված 4	Հոդված 3			Հոդված 4
Հոդված 5	Հոդված 4			Հոդված 5
Հոդված 6	Հոդված 5			Հոդված 6
Հոդված 6ա	Հոդված 5ա			Հոդված 7

Հոդված 7	Հոդված 6			—
			1(1) հոդված	8(1) հոդված
			Հոդված 3	8(2) հոդված
			Հոդված 4	Հոդված 9
			5(1) հոդված	10(1) հոդված
			5(2) հոդված	10(2) հոդված
—	—	Հոդված 4		10(3) հոդված
			Հոդված 6	Հոդված 11
			1(2) հոդված	Հոդված 12
—	—	Հոդված 5		Հոդված 13
—	—			Հոդված 14
Հոդված 8	Հոդված 7			Հոդված 15
Հավելվածի Ա. 1 կետ	Հավելվածի Ա. 1 կետ			Հավելված I, Ա կետ (օրենք)
Հավելվածի Ա. 2, 3, 4, 5 կետեր	—			Հավելված I, Ա. 1 (ա), (բ), (գ), (դ) կետեր
—	Հավելվածի Ա. 2, 3, 4, 5 կետեր			Հավելված I, Ա. 2 (ա), (բ), (գ), (դ) կետեր
Հավելվածի Բ կետ	Հավելվածի Բ կետ			Հավելված I, Բ կետ
—	—	—	—	Հավելված II,

				մաս Ա
—	—	—	—	Հավելված II, մաս Բ
—	—	—	—	Հավելված III



1) ՊՏ թիվ C 286, 14.11.1990թ., էջ 4 եւ 1993 թվականի դեկտեմբերի 16-ին ներկայացված փոփոխություն:

2) ՊՏ թիվ C 339, 31. 12. 1991թ., էջ 5 եւ ՊՏ թիվ C 295, 22. 10. 1994թ., էջ 30:

3) Եվրոպական պառլամենտի՝ 1991 թվականի դեկտեմբերի 13-ի (ՊՏ թիվ C 13, 20.01.1992թ., էջ 443) եւ 1994 թվականի ապրիլի 20-ի եզրակացություններ (ՊՏ թիվ C 128, 09.05.1994թ., էջ 136), Խորհրդի 1995 թվականի դեկտեմբերի 8-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ թիվ C 356, 30.12.1995թ.) եւ Եվրոպական պառլամենտի 1996 թվականի մարտի 28-ի որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

4) ՊՏ թիվ L 308, 19. 11.1974թ., էջ 18: Թիվ 3572/90 (ԵՏՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 353, 17. 12. 1990թ., էջ 12):

5) ՊՏ թիվ L 308, 19. 11.1974թ., էջ 23: Թիվ 3572/90 (ԵՏՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 353, 17. 12. 1990թ., էջ 12):

6) ՊՏ թիվ L 334, 24. 12. 1977թ., էջ 37: 89/438/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 212, 22. 07. 1989թ., էջ 101) եւ ուղղում (ՊՏ թիվ L 298, 17.10.1989թ., էջ 31):

7) ՊՏ թիվ 2, 15. 01. 1962թ., էջ 36/62:

8) ՊՏ թիվ L 257, 19. 10.1968թ., էջ 2: Թիվ 2434/92 (ԵՏՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 245, 26. 08. 1992թ., էջ 1):

9) «Եվրոպական համայնքի անդամ պետությունների միջեւ մասնագիտական վերապատրաստման որակավորումների համեմատության մասին» Խորհրդի 1985 թվականի հուլիսի 16-ի 85/368/ԵՏՀ որոշում (ՊՏ L 199, 31. 07. 1985թ., էջ. 56):

10) «Ավտոճանապարհային փոխադրումներին վերաբերող սոցիալական օրենսդրության ներդաշնակեցման մասին» Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3820/85 կանոնակարգ (ԵՏՀ) (ՊՏ L 370, 31. 12. 1985 թ., էջ 1):

11) «Ավտոճանապարհային տրանսպորտային միջոցներում գրանցման սարքավորումների մասին» Խորհրդի 1985 թվականի թիվ 3821/85 կանոնակարգ (ԵՏՀ) (ՊՏ L 370, 31. 12. 1985թ., էջ. 8): Հանձնաժողովի թիվ 1056/97 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 154, 12.06.1997թ., էջ 21):

(  12  12) «Ավտոճանապարհով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքները համապատասխանեցնելու մասին» Խորհրդի 1994 թվականի

նոյեմբերի 21-ի 94/55/ԵՀ հրահանգ (ՊՏ L 319, 12. 12. 1994թ., էջ. 7): Հանձնաժողովի 96/86/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 335, 24. 12. 1996թ., էջ 43):

13) «Ավտոճանապարհով, երկաթուղով եւ ներցամաքային ջրուղիներով վտանգավոր ապրանքների փոխադրման անվտանգության գծով խորհրդատուների նշանակման եւ մասնագիտական որակավորման մասին» Խորհրդի 1996 թվականի հունիսի 3-ի 96/35/ԵՀ հրահանգ (ՊՏ L 145, 19. 06. 1996թ., էջ 10):

14) «Եվրոպական համայնքի տարածքում, տարածքից դուրս եւ դեպի տարածք թափոնների փոխադրման ստուգումների եւ վերահսկողության մասին» Խորհրդի 1993 թվականի փետրվարի 1-ի թիվ 259/93 (ԵՏՀ) կանոնակարգ (ՊՏ L 30, 06. 12. 1993թ., էջ 1): Թիվ 120/97 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 22, 24.01.1997թ., էջ 14):